ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/11

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.01.2018թ. թիվ 03/26-3/637-18 գրությամբ Գայանե Մելքոմ Մելքոմյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 16.01.2018թ. թիվ D5FD-4B7B-5E6A-438B գրության հիման վրա, 18.01.2018թ. թիվ 03/26-3/637-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է Գայանե Մելքոմ Մելքոմյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **Գայանե Մելքոմ Մելքոմյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 25.01.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/1100-18 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է Գայանե Մելքոմ Մելքոմյանին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Գայանե Մելքոմ Մելքոմյանը 02.02.2018թ. Խորհրդին հայտնել է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով նիստին չի մասնակցելու, միաժամանակ հայտնելով, որ Ցուցակում ներառվելու վերաբերյալ առարկություն չունի:

Գայանե Մելքոմ Մելքոմյանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.02.2018թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր մասնակցությունը:

3. **«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն 16.01.2018թ. թիվ D5FD-4B7B-5E6A-438B գրությամբ հայտնել է, որ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից 2017թ. դեկտեմբերի 7-ին իրավաբանական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-17/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մանակիցների հայտ է ներկայացրել նաև Գայանե Մելքոմ Մելքոմյանը և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Այնուհետև վերջինիս առաջարկվել է հրավերով սահմանված ժամկետում ներկայացնելու որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Սակայն վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերով պահանջվող որակավորումը հավաստող փաստաթղթերը, որի հիման վրա մասնակցի հայտը մերժվել է:

Պատվիրատուն, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետը, խնդրել է Գայանե Մելքոմ Մելքոմյանին ներառել Ցուցակում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.02.2018թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2018/11 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/11 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից 2017թ. դեկտեմբերի 7-ին իրավաբանական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-17/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մանակիցների հայտ է ներկայացրել նաև Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

2. Գայանե Մելքոմ Մելքոմյանը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-17/11» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Գայանե Մելքոմ Մելքոմյանը ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

4. Նույն արձանագրության 4-րդ ենթակետի համաձայն՝ որոշվել է Գայանե Մելքոմ Մելքոմյանին ծանուցել և առաջարկել ծանուցումը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում հրավերով սահմանված էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Գայանե Մելքոմ Մելքոմյանին armeps համակարգի միջոցով 2017թ. դեկտեմբերի 15-ին ծանուցվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, սակայն դեկտեմբերի 21-ի ժամը 10:00-ի դրությամբ վերջինիս կողմից ընդհանրապես չի ներկայացվել նշված փաստաթղթերը, որի հիման վրա գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, մերժել է Գայանե Մելքոմ Մելքոմյանի հայտը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով << ֆինանսների նախարարության 18.01.2018թ. թիվ 03/26-3/637-18 գրությունը, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի 16.01.2018թ. թիվ D5FD-4B7B-5E6A-438B գրությունը՝ կից փաստաթղթերով և Գայանե Մելքոմ Մելքոմյանի 02.02.2018թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն (այսուհետ՝ Օրենք)՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: ***Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:***

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝

առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում ***փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.13-րդ ենթակետի 4-րդ պարբերության համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով ***առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը*** և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-17/11» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած Գայանե Մելքոմ Մելքոմյանը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 3-րդ ենթակետով կայացված որոշմամբ ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, առաջնորդվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, 15.12.2017թ. Armeps համակարգի միջոցով ոչ

ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է Գայանե Մելքոմ Մելքոմյանին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Գայանե Մելքոմ Մելքոմյանի կողմից սահմանված ժամկետում ընդհանրապես չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.12.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Գայանե Մելքոմ Մելքոմյանի հայտը մերժել է, դադարեցնելով վերջինիս մասնակցությունը ընթացակարգին:

Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ Գայանե Մելքոմ Մելքոմյանը 02.02.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վերաբերյալ առարկություն չունի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ Գայանե Մելքոմ Մելքոմյանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն, չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի հետևանքով Գայանե Մելքոմ Մելքոմյանը «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-17/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, և որի հետևանքով վերջինիս հետագա մասնակցությունը նշված ընթացակարգին դադարեցվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 18.01.2018թ. թիվ 03/26-3/637-18 գրությամբ Գայանե Մելքոմ Մելքոմյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և Գայանե Մելքոմ Մելքոմյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ